Հավելված N 3

ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի

մայիսի 30-ի N 265-Ա հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Կապանի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար **Կապան համայնքի Աղվանի բնակավայրի խմելու ջրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքների** որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԽԾՁԲ-24/10 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի սեպտեմբերի 25-ին կնքված N ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԽԾՁԲ-24/10 ծածկագրով գնման պայմանագրում 2026 թվականի մայիսի 14-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1 պայմանագրով սահմանված ժամկետում նախատեսված ծառայությունների մատուցումը չի ավարտվել

Փոփոխության նկարագրություն Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման վերջնաժամկետի երկարաձգում, համաձայնագրի կնքում

Փոփոխության հիմնավորում Գնումների մասին ՀՀ օրենսդրություն, ՀՀ կառավարության 2026թվականի փետրվարի 12-ի թիվ 142-Ա որոշում, պայմանագրի 7.5, 7.6 կետեր

Պատվիրատու՝ Կապանի համայնքապետարան

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ/Աղվանի ջրագիծ/
«25» սեպտեմբեր 2024թ. կնքված N «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԽԾՁԲ-24/10»
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Կապան «14» մայիս 2026թ.

Կապանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի, որը գործում է ՏԻՄ օրենքի և կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Գարգաս>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գարիկ Գասպարյանի, որը գործում է ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2026թվականի փետրվարի 12-ի թիվ 142-Ա որոշումը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Սույն Համաձայնագրի առարկա է հանդիսանում պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման վերջնաժամկետի փոփոխությունը:
1.2.Ծառայությունների մատուցման վերջնաժամկետ է հանդիսանում 2026թ. հունիսի 30-ը:
1.3.Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-Գնման ժամանակացույցը /Հավելված 1/՝ համաձայն սույն Համաձայնագրի փոփոխության:
1.4.Պայմանագրի Վճարման ժամանակացույցը/Հավելված 2/՝ համաձայն սույն Համաձայնագրի փոփոխության:
1.5.Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:
1.6.Սույն Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև Համաձայնագրի ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:
1.7.Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ:
1.8.Սույն Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Կապանի համայնքապետարան	<<Գարգաս>> ՍՊԸ
Ք. Կապան, Չարենցի 1	Ք. Կապան, Բաղաբուրջ թաղ. տուն 26
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ Կապան մասնաճյուղ
ՀՀ 900312000301 համայնք	ՀՀ 1150001537487470
ՀՀ 900312000483 սուբվենցիա	ՀՎՀՀ 09423167
ՀՎՀՀ 09426088	
_____ (ստորագրություն) Կ.Տ.	_____ (ստորագրություն) Կ.Տ.